


ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ  
ՍԲ. ԵՐՐԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԹՕՐՕՆԹՕ, ՕՆԹ.  
ԳԱՆԱՏԱ

Հոգեւոր Հովիւ  
Ժիրայր Արղ. Թաշճեան



PARISH COUNCIL OF  
HOLY TRINITY ARMENIAN CHURCH  
MAILING ADDRESS  
EXECUTIVE OFFICE 103 YONGE STREET  
TORONTO, ONT., CANADA

Holy Trinity Armenian Church  
14 Woodlawn Ave., West, Toronto, Ont., Canada  
Mailing Address: 103 Yonge St., Toronto 1, Ont.

Մարտ 12, 1962  
Թորոնթո, Օնթ.

Բարձրաշնորհ  
Տ. Սիոն Ս. Արքեպիսկ. Մանուկեան  
Բարեջան Առաջնորդ եւ Նախագահ Պատուարժան Թեմական Խորհուրդոյ  
Հիւսիսային Ամերիկայի Հայոց,  
Նիւ Եորք, Մ. Ն.,

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Այսու կու գամ տեղեկացնելու Ձերդ Սրբազնութեան թէ  
ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Ս. Եկեղեցւոյս ծխական Խորհուրդին հրաւերով  
Տարեկան ծխական ժողովին Հաւաքոյթը տեղի ունեցաւ Կիրակի 25 Փետրուար, 1962  
երեկոյեան ժամը 7.00ին, որուն ընթացքին Ս. Եկեղեցւոյս յարակից կազմակերպու-  
թիւնները տուին իրենց տարեկան տեղեկագիրները, իրենց միամեայ գործունէութեանց  
թեանց:

Իբրեւ նորընտիր Հովիւ, ես եւս տուի իմ տեղեկագիրս, որ աւելի կարգ մը  
խորհրդածութիւններ էին, նախ իմ պաշտօնիս, ապա Եկեղեցւոյն նպատակին, ինչպէս  
նաև ժողովուրդին դիրքին՝ հանդէպ Մեր Ս. Եկեղեցւոյն վերաբերմամբ: Մասնաւոր  
կերպով խօսեցայ նաև Ս. Եկեղեցւոյս յարակից կազմակերպութեանց դիրքին եւ  
պաշտօնին մասին: Յուսկ ապա տուի հնգամեայ գործունէութեանս տեղեկագիրը:  
Հաւաքոյթին երկրորդ մասին տեղի ունեցաւ ծխական Խորհուրդի չորս  
դադարեալ անդամներուն տեղ նորերու ընտրութիւնը:

Ըստ Բնտրողական Յանձնախումբին տեղեկագրին, Յանձնախումբը տասներօթ  
անձերու դիմած էր անոնց թեկնածութիւնը ապահովելու համար, եւ սակայն անոնցմէ  
միայն եօթը անձեր փափաք յայտնած էին իրենց թեկնածութիւնը ղնելու:

Այսպիսով եօթը թեկնածուներէն չորսը ընտրուեցան իբրեւ ծխական Խորհուր-  
դի անդամ:

Արդ, Սրբազան Հայր, պարագայ մը որ կ'ուզէի այս առթիւ Ձերդ Սրբազնութեան  
ներկայացնել այն է թէ վերոյիշեալ չորս ~~Ընտրուներէն~~ Ընտրեալներէն մէկը միայն  
ԵՐԿՈՒ ամսուայ անդամագրուած է, եւ սակայն վճարած է իր 1961 տարուան ծխական  
Տուրքը: Արդեօք իրաւասութիւն ունի ընտրուելու թէ ոչ, եւ թէ ընտրուողներ  
արդեօք իրաւասու են նախքան Թեմակալ Առաջնորդին Վաւերացումը ստանալին եւ  
իրենց Ուխտը կատարելը ծխական Խորհուրդի ոեւէ մէկ նիստի մասնակցիլ:

Սոյն խնդրի կապակցութեամբ Բողոքագիր մըն ալ ստացած ըլլալով զայն եւս  
ներկա կը գտնէք, ստորագրուած Ս. Եկեղեցւոյս Պատուական Երեսփոխաններէն Տիար  
Գէորգ Սէմէրճեանի:

Երկու ամսուայ անդամի մը ընտրութեամբը այսպէս արգելք կը դրուէր  
Գաղութիս Պատուական Ազգայիններէն Տիար Յարութիւն Աֆարեանի, հազիւ երեք քուէ-  
ներու տարբերութեամբ, Եկեղեցասէր եւ բարեպաշտօն ազգային մը, որ ամէն զոհողու-  
թիւն յանձն առնելով ջանք չխնայէր օգտակար հանդիսանալու համար Ս. Եկեղեցւոյս:

Ուրիշ պարագայ մը եւս կ'ուզէի ներկայացնել, այն է թէ երբեմն այնպէս կը  
պատահի որ Ս. Պատարագին ներկայ կը գտնուին կարգ մը հայեր, որոնք Անգլիքան  
Եկեղեցւոյն կը պատկանին, և որոնք կը փափաքին Ս. Հաղորդութիւն ստանալ, արդեօք  
արդար է որ այնպիսիներ Ս. Հաղորդութիւն ստանան, մանաւանդ երբ գիտենք թէ տակաւին  
ի հաղորդութեան չենք Եպիսկոպոսական Եկեղեցիին հետ:

Հետեւեալները Ձերդ Սրբազնութեան ներկայացնելով, եւ Ձեր լուսաբանութիւն-  
ներուն սպասելով, մնամ ի համբիւր Ձեր Ս. Աջոյն, Ձերդ խոնարհ որդի

Տիար Կլ. Թաշճեան

Երբ Բողոքագիր  
հասնէր Ս. Սիոն Ս.  
Արքեպիսկ. Մանուկեան  
հասնէր Ս. Սիոն Ս.  
Արքեպիսկ. Մանուկեան